ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 04

«Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի

ռեկտորատի 17.10.2019թ. նիստի

Ռեկտորատի նիստը կայացավ ք. Գյումրի, Պ. Սևակ 4 հասցեում:

Նիստին ներկա էին ռեկտորատի 16 (տասնվեց) անդամից 13-ը (տասներեք):

Նիստին մասնակցում էին՝

1. Ե. Սերոբյան՝ ռեկտորի ԺՊ.
2. Կ. Պետրոսյան՝ ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար,
3. Ս. Շահպարոնյան՝ ռեկտորի խորհրդական,
4. Գ. Նիկողոսյան՝ պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավարի ԺՊ
5. Հ. Մելքոնյան՝ արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն
6. Ռ. Քալաջյան՝ ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ,
7. Թ. Խաչատրյան՝ գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն,
8. Ն. Ավետիսյան՝ ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ
9. Բ. Պողոսյան՝ բնագիտամաթեմատիկական ֆակուլտետի դեկան
10. Թ. Մելիքյան՝ հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան,
11. Ռ. Մարդոյան՝ մանկավարժության ֆակուլտետի դեկան
12. Օ. Հովհաննիսյան՝ սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան
13. Ա. Հովհաննիսյան՝ անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ

ՕՐԱԿԱՐԳ

1. 1 Ռազմական անբիոնի պետ՝ գնդապետ Արթուր Վազգենի Մկրտչյանին պարգևատրելու մասին
1.2 Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Արտուշ Գևորգի Խաչատրյանին պարգևատրելու մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

2. ՇՊՀ հյուրատան գործարկման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

3. Ավագ դպրոցի համալսարանի կողմից 2019-2020 ուստարում կազմակերպվող դասընթացների անցկացման մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

4. Ընթացիկ հարցեր

1. ԼՍԵՑԻՆ՝

1.1 Ռազմական անբիոնի պետ՝ գնդապետ Արթուր Վազգենի Մկրտչյանին պարգևատրելու մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ հոկտեմբերի 14-ին համալսարանի ռազմական ամբիոնի 12 ուսանողներ հանդիսավոր պայմաններում ստանալու են պահեստազորի լեյտենանտի սպայական կոչում: Այս գործընթացի և ընդհանրապես ռազմական ամբիոնում ուսումնական ու ծառայողական աշխատանքների բավականին լավ դրվածքի ու դրանց շարունակականության մեջ իր լուման ունի ամբիոնի պետ գնդապետ Ա. Մկրտչյանը: Պարոն Սերոբյանը առաջարկեց գնդապետ Ա. Մկրտչյանին պարգևատրել անվանական հուշանվերով՝ ժամացույցով, ինչպես նաև համալսարանի կողմից ռազմական ամբիոնին նվիրել համակարգիչ և պրոյեկտոր:
ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ռազմական ամբիոնի պետ գնդապետ Արթուր Վազգենի Մկրտչյանին ծառայողական պարտականությունները և ուսումնական գործընթացները պատշաճ կատարելու, ռազմական ամբիոնում կայուն ուսումնակրթական գործունեություն հաստատելու և զարգացնելու համար պարգևատրել անվանական հուշանվերով (ժամացույցով):
2.Ռազմական ամբիոնին համալսարանի կողմից նվիրել
Համակարգիչ /Notebook/-1 հատ Lenovo V11015LAP S/N R90P5G6L
Պրոյեկտոր -1 հատ Vivitek DX255 S/N FDX2556490087
ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

1.2 ԼՍԵՑԻՆ՝

Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ Արտուշ Գևորգի Խաչատրյանին պարգևատրելու մասին

Հաղ.՝ ռեկտորի ԺՊ Եր. Սերոբյան

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Աշխատանքային երկարատև վաստակի, բուհում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի զարգացման ոլորտում ներդրած նշանակալից ավանդի համար և ծննդյան 70 ամյակի առթիվ՝ «Ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի» ամբիոնի դոցենտ Արտուշ Գևորգի Խաչատրյանին պարգևատրել շնորհակալագրով և անվանական հուշանվերով:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

13 անդամ. կողմ՝ 13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0:

2. ԼՍԵՑԻՆ՝

ՇՊՀ հյուրատան գործարկման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ համալսարանի հյուրատունը կենցաղային բոլոր պայմաններով ապահովված է և նկատի ունենալով այն հանգամանքը, որ տուրիստական շարժումը քաղաքում շատացել է, նպատակային կլինի գործարկել հյուրատունը նաև զբոսաշրջիկների համար, որպեսզի համալսարանի բյուջե ձեռնարկատիրական գործունեությունից նույնպես որոշակի մուտքեր լինեն: Պարոն Սերոբյանը նշեց նաև, որ հյուրատանը համալսարանի կողմից անվճար հիմունքներով հյուրընկալվում են շարժունության ծրագրով համալսարանում ուսանող ուսանողները, մեր բուհում դասավանդող, Երևանից շաբաթը 1-2 օրով եկող դասախոսները, կամ ավարտական քննությունների՝ Երևանից և այլ քաղաքներից եկող քննության նախագահները, (մեկ կամ մի քանի օրով): Պարոն Սերոբյանը հավելեց, որ անհրաժեշտություն է առաջանում որոշակի վճար սահմանել հյուրատան համար, ընդ որում այդ վճարը պետք է տարբերակված լինի ժամավճարային կարգով աշխատող դասախոսների և համալսարան այցելող հյուրերի, դրսից եկող ուսանողների և զբոսաշրջիկների համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Բ. Պողոսյանը, Ռ. Մարդոյանը, Թ. Մելիքյանը, Ս. Շահպարոնյանը Ն. Ավետիսյանն առաջարկեց, համալսարանի կողմից ընթացակարգ մշակել, որպեսզի հստակ տարբերակվեն անվճար և վճարովի հիմունքներով հյուրանոցից օգտվողները:

Հ. Մելքոնյանը, ով առաջարկեց, որ ընթացակարգում հստակ սահմանվեն հյուրանոցից օգտվող անձանց կատեգորիաները, վճարովի, անվճար և զեղչային հատկացումները:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

Հանձնարարել ռեկտորի խորհրդական Ս. Շահպարոնյանին, ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվառման բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ Ռ. Քալաջյանին և պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար Գ. Նիկողոսյանին առկա իրավիճակն ուսումնասիրել, մշակել հյուրատան ֆինանսավորման վերաբերյալ վճարովի հիմունքներով այն գործարկելու ընթացակարգային նախագիծ և ներկայացնել ռեկտորատ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝13, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

3. ԼՍԵՑԻՆ՝

Ավագ դպրոցի համալսարանի կողմից 2019-2020 ուստարում կազմակերպվող դասընթացների անցկացման մասին

Պարոն Սերոբյանը ներկայացրեց, որ ՇՊՀ-ի ավագ դպրոցի տնօրինության հետ համաձայնեցված պետք է կազմել հստակ ժամանակացույց, մատյաններ՝ համալսարանի կողմից 2019-2020 ուստարում կազմակերպվող դասընթացները նոյեմբերի 1-ից ՇՊՀ-ի թիվ 3-րդ ավագ դպրոցի, ինչպես նաև մարզի այլ դպրոցների աշակերտների հետ կազմակերպելու նպատակով: Պարոն Սերոբյանը առաջարկեց, որ ՇՊՀ-ի ավագ դպրոցի աշակերտների հետ կազմած պայմանագրում պետք է ներառվի նաև այն դրույթը, որ եթե դասընթացներին մասնակցած դիմորդները առաջին հայտով չեն դիմում ՇՊՀ, ապա յուրաքանչյուր առարկայի համար նրանցից ամսական 10 000 ՀՀ դրամ գումար հետ պետք է գանձել: Պարոն Սերոբյանը հավելեց, որ վերոգրյալ դասընթացներում ներգրավված մարզի այլ դպրոցների աշակերտների հետ նույնպես պետք է կազմել պայմանագիր, ըստ որի նրանք պետք է վճարեն յուրաքանչյուր առարկայի համար ամսական 10 000 ՀՀ դրամ գումար: Վերոգրյալ հարցի կազմակերպչական աշխատանքների իրականացուումը պարոն Սերոբյանը հանձնարարեց բուհի ոսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնին և դպրոցի տնօրինությանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Հանձնարարել ոսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի պրոռեկտոր-տնօրենի ՊԿ Ն. Ավետիսյանին, ավագ դպրոցի տնօրինության հետ համագործակցված, 2019-2020 ուստարում դիմորդների համար համալսարանի կողմից իրականացվող նախապատրաստական դասընթացները կազմակերպել սույն թվականի նոյեմբերի 1-ից:
2. Հանձնարարել անձնակազմի կառավարման և իրավական ապահովման բաժնի պետ Ա. Հովհաննիսյանին դիմորդների հետ կազմած պայմանագրում ներառել այն դրույթը, որ եթե դասընթացներին մասնակցած դիմորդները առաջին հայտով չեն դիմում ՇՊՀ, ապա յուրաքանչյուր առարկայի համար նրանցից գանձել ամսական 10 000 ՀՀ դրամ:
3. Նախապատրաստական դասընթացներում ներգրավված Շիրակի մարզի դպրոցների 12-րդ դասարանի աշակերտների և նախորդ տարիներին բուհ չընդունված դիմորդների համար սահմանել վճար՝ մեկ առարկայի համար ամսական 10 000 ՀՀ դրամ:

ՔՎԵԱՐԿԵՑԻՆ՝

Կողմ՝7 դեմ՝ 1, ձեռնպահ՝ 3 (նիստին մասնակից 2 անդամներ հարգելի պատճառով չեն մասնակցել քվեարկությանը):

Ռեկտորատի նախագահ՝ ռեկտորի ԺՊ	Ե. Սերոբյան
Ռեկտորատի քարտուղար, գիտական քարտուղար՝	Կ. Պետրոսյան
Պրոռեկտոր-աշխատակազմի ղեկավար	Գ. Նիկողոսյան
Ռեկտորի խորհրդական՝	Ս. Շահպարոնյան
Ֆինանսատնտեսական վերլուծությունների, ծրագրավորման և հաշվապահական հաշվ. բաժնի վարիչ-գլխավոր հաշվապահ՝	Ռ. Քալաջյան
Արհեստակցական կազմակերպության նախագահ՝	Վ. Խաչատրյան
Գիտական քաղաքականության, որակի ապահովման և կառավարման կենտրոնի տնօրեն՝	Ա. Սարգսյան
Արտաքին համագործակցության և հասարակայնության հետ կապերի կենտրոնի տնօրեն՝	Հ. Մելքոնյան
Գրադարան-ուսումնագիտական խորհրդատվությունների, նորարարությունների և ՏՏ կենտրոնի տնօրեն՝	Թ. Խաչատրյան
Ուսումնամեթոդական գործընթացի կառավարման կենտրոնի փոխտնօրեն	Ն. Ավետիսյան
Բնագիտամաթեմատիկական	

ֆակուլտետի դեկան՝	Բ. Պողոսյան
Հումանիտար գիտությունների և արվեստի ֆակուլտետի դեկան՝	Թ. Մելիքյան
Մանկավարժության ֆակուլտետի դեկան՝	Ռ. Մարդոյան
Սոցիալական գիտությունների և իրավունքի ֆակուլտետի դեկան՝	Օ. Հովհաննիսյան
Ռազմական ամբիոնի պետ՝	Ա. Մկրտչյան
Անձն.կառ.նիրավ.ապահովման բաժնի վարիչ՝	Ա. Հովհաննիսյան